Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-23/5-ԳՀԾՁԲ ծածկագրով գնանշման հարցման միջոցով իրականացվող աուդիտորական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սարյան 22

27 փետրվարի 2023թ.
ժամը 15:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մեսրոպ Ղարիբյանը, անդամներ անդամներ՝ Լիլիթ Երեմյանը, Գայանե Ավետիսյանը, Աստղիկ Հակոբջանյանը, Լուսինե Հովհաննիսյանը և քարտուղար՝ Հայկ Կոշեցյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և հարցում ներկայացնելու վերաբերյալ

ՀԾԿՀ-23/5-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Ղարիբյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումները և գտնվելու վայրը		
	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ ք.Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք,	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ ք.Երևան, Հանրապետության 22, 5-րդ հարկ	Նախահաշվային գին
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	
	Գնային առաջարկը /ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/		
1	27000000	18000000	21600000

Հանձնաժողովը ուսումնասիրեց հայտերը և արձանագրեց, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն ներառված չէ մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (հղում՝ https://caaa.am/reestr/auditorakan-kazmakerputhyun/):

Միաժամանակ, վերը նշված ընկերությունը գնման ընթացակարգի իր հայտում ներառել է փաստաթուղթ՝ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով որոշում, որով դատարանը ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մասնակի բավարարել է՝ արգելելով ՀՀ ֆինանսների նախարարությանը պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության թիվ ԱԾ N054 «Աուդիտորական ծաայությունների իրականացման» լիցենզիան, և պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը)՝ մինչև վերը նշված գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը 06.03.2023թ.-ին որոշեց կասեցնել նիստը և հարցում ուղարկել պաշտոնական աղբյուրներին՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ և ՀՀ ֆինանսների նախարարություն, ճշտելու համար «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության ներառված լինելը աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում և ստանալու դիրքորոշում՝ գնման ընթացակարգին «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության հետագա մասնակցության վերաբերյալ:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հարցման պատասխանները ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Մեսրոպ Ղարիբյան
անդամներ	_____	Լիլիթ Երեմյան
	_____	Գայանե Ավետիսյան
	_____	Աստղիկ Հակոբջանյան
	_____	Լուսինե Հովհաննիսյան
քարտուղար	_____	Հայկ Կոշեցյան